

ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ

Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն Առևտրային Կոոպերատիվ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Ա. Ինստիտուցիոնալ նկարագիր
Բ. Վարկանիշներ և հիմնական ցուցանիշներ 2025 թ. վերջի դրությամբ
Գ. Հաճախորդի նկարագիր
Դ. Կոոպերատիվ կառավարում

II. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Կոոպերատիվ ինքնություն և սոցիալական առաքելություն
Բ. Հիմնական սոցիալական հանձնառություններ
Գ. Ֆինանսավորող գործընկերներ և ճանաչումը շուկայում
Դ. Սոցիալական պարտատոմսերի թողարկման հիմնավորումը

III. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

Ա. Ֆինանսական միջոցների օգտագործում
Բ. Ծրագրի գնահատման և ընտրության ընթացակարգ
Գ. Ֆինանսական միջոցների կառավարում
Դ. Հաշվետվողականություն

IV. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ա. Երկրորդ Կողմի Եզրակացություն (SPO)
Բ. Առկա ESG (բնապահպանական, սոցիալական և կառավարման) գնահատական/վարկանիշ

V. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

VI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ա. Բացառման չափանիշներ (չֆինանսավորվող ուղղություններ)
Բ. 2X Challenge-ին համապատասխանության չափանիշներ
Գ. Համապատասխանեցում ICMA (ԿՇՄԱ) Սոցիալական Պարտատոմսերի Սկզբունքներին (2025)
Դ. Ազդեցության հաշվետվության ցուցանիշներ
Ե. Վարկային պորտֆելը 2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կոնտակտային տվյալներ

I. ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ-ի ՄԱՍԻՆ	II. ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ	III. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ	IV. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	V. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	VI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I. «ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»-Ի ՄԱՍԻՆ

Ա. Ինստիտուցիոնալ նկարագիր

Ֆարմ Կրեդիտ Արմենիա Ունիվերսալ Վարկային Կազմակերպությունը Կոոպերատիվ սկզբունքներով առաջնորդվող միակ ֆինանսական կառույցն է Հայաստանում: Կազմակերպությունը գրանցվել և լիցենզավորվել է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից 2007թ. սեպտեմբերի 18-ին որպես ՈՒնիվերսալ Վարկային Կազմակերպություն Առևտրային Կոոպերատիվ: Ֆարմ Կրեդիտ-ը գործում է Հայաստանի գյուղական համայնքներում կյանքի որակը բարելավելու համար՝ մատուցելով հասանելի, պատասխանատու և մատչելի ֆինանսական ծառայություններ:

Իրավական ձև	Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն Առևտրային Կոոպերատիվ
Կարգավորող մարմին	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ
Հիմնադրման տարի	2007 թ. (գրանցման համար 20)
Գլխամասային գրասենյակ	Թբիլիսյան խճուղի 9/16, Երևան, Հայաստան
Կայք	www.fca.am
Կապ	fca@fca.am | +374 10 550831
Հայեցակարգի ստանդարտ	ICMA (ԿՇՄԱ) Սոցիալական Պարտատոմսերի Սկզբունքներ (SBP) 2025

Ավելի քան 17 տարի Ֆարմ Կրեդիտն իր գործունեությունը կենտրոնացրել է Հայաստանի գյուղական համայնքների և գյուղատնտեսության ոլորտի սպասարկման և աջակցման վրա: Իր կոոպերատիվ բիզնես-մոդելի շնորհիվ Կազմակերպությունը հետևողականորեն ընդլայնել է ֆերմերների, գյուղական տնտեսությունների, ՓՄՁ-ների և ագրոբիզնեսների համար ֆինանսների հասանելիությունը՝ աջակցելով գյուղատնտեսական արտադրողականությանը, զբաղվածությանը և ֆինանսական ներառականությանը երկրի գյուղական շրջաններում:

Սոցիալական պարտատոմսերի թողարկումից ներգրավված միջոցները միտված չեն լինելու ֆինանսավել վարկավորման նոր ռազմավարություն. Փոխարենը, դրանք աջակցելու և ընդլայնելու են Ֆարմ Կրեդիտի տարիների ընթացքում ձևավորված ֆինանսավորման գործունեությունը, որը լիովին համահունչ է կոոպերատիվի առաքելությանն ու սոցիալական նպատակներին

Բ. Վարկանիշներ և հիմնական ցուցանիշներ 2025 թ. վերջի դրությամբ

2007 Հիմնադրման տարի	**12,000+** Անդամ-փայատերեր	**10 + գլխամասային գրասենյակ** Մասնաճյուղեր 6 մարզերում	**92** Աշխատակիցներ

47.5 մլն ԱՄՆ դոլար Վարկային պորտֆել (զուտ)	**53.5 մլն ԱՄՆ դոլար** Ընդհանուր ակտիվներ	**0.30%** Չաշխատող վարկերի (NPL) հարաբերակցություն (30+ օր)	**5,600 ԱՄՆ դոլար** Վարկի միջին չափը

Ոսկե մակարդակ
Հաճախորդների Պաշտպանության Հավաստագիր (MFR, 2022 և 2025)

sBB+
Սոցիալական և բնապահպանական վարկանիշ (2025)

77%
Պորտֆել, որը համապատասխանում է 2X Challenge չափանիշներին

30%
Պորտֆել 21-35 տարեկան վարկառուներին



I. ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ-ի ՄԱՍԻՆ	II. ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ	III. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ	IV. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	V. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	VI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Գ. Մեր հաճախորդների նկարագիրը

Ֆարմ Կրեդիտ-ը սպասարկում է ՀՀ գյուղատնտեսական արժեշղթայում ներգրավված անհատ ֆերմերներին, գյուղական տնային տնտեսություններին, ագրոբիզնեսներին և փոքր ու միջին ձեռնարկություններին: Կոոպերատիվի առաջնահերթությունը արտադրողական գործունեության ֆինանսավորումն է, որը նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը, արտադրողականության աճին և ֆինանսական ներառականությանը:

Ֆարմ Կրեդիտ -ի հաճախորդների բազան հիմնականում բաղկացած է փոքր և ընտանեկան ֆերմերային տնտեսություններից, որոնք զբաղվում են բուսաբուծությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ և խաղողագործությամբ, ինչպես նաև գյուղական ՓՄՁ-ներից, որոնք ներգրավված են գյուղմթերքի վերամշակման, ռեսուրսների մատակարարման, պահեստավորման, լոգիստիկայի և հարակից ծառայություններում: Կոոպերատիվը նաև ֆինանսավորում է կին ձեռնարկատերերին, ինչպես նաև երիտասարդ, սկսնակ և փոքր (YBS) ֆերմերներին՝ ընդգծելով ֆինանսավորման հասանելիության իր հանձնառությունը:

Ֆարմ Կրեդիտ -ի վարկառուների ճնշող մեծամասնությունը (ավելի քան 85%) բնակվում է Երևանից դուրս, որտեղ ֆինանսական ծառայությունների հասանելիությունը մնում է համեմատաբար սահմանափակ: Իր՝ մոտ 5,600 ԱՄՆ դոլար միջին վարկի չափով, Ֆարմ Կրեդիտ -ն հիմնականում ֆինանսավորում է այն ներդրումները, որոնք աջակցում են եկամտի ձևավորմանը, բիզնեսի զարգացմանը և գյուղական համայնքների երկարաժամկետ դիմակայունության ապահովմանը:

Դ. Կոոպերատիվ կառավարում

Ֆարմ Կրեդիտ-ը գործում է եռաստիճան կառավարման կառուցվածքով: Փայատերերի ընդհանուր ժողովը բարձրագույն կառավարման մարմինն է, որտեղ ավելի քան12,000 անդամ-փայատերերից յուրաքանչյուրն ունի մեկ ձայն՝ անկախ փայաբաժնի չափից: Դիտորդ խորհուրդը, որը բաղկացած է վեց մարզերի ներկայացուցիչներից և երկու անկախ անդամից, սահմանում է ռազմավարությունն ու իրականացնում ընդհանուր վերահսկում: Ընթացիկ գործունեությունը ղեկավարվում է Գլխավոր Գործադիր Տնօրենի/նախագահի կողմից՝ փորձառու ղեկավար թիմի աջակցությամբ:

Ֆարմ Կրեդիտ -ի կառավարման համակարգը նախատեսված է արդյունավետ վերահսկողության, ռիսկերի ողջամիտ կառավարման և թափանցիկ որոշումների կայացման համար: Դիտորդ խորհուրդը վերահսկում է Ֆարմ Կրեդիտ -ի ռազմավարության իրականացումը, հաստատում հիմնական քաղաքականությունները և վերահսկում ինստիտուցիոնալ աշխատանքը, մինչդեռ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է կոոպերատիվի նպատակների ամենօրյա կատարման համար: Կառավարման այս համակարգը նպաստում է սույն Հայեցակարգի շրջանակում սոցիալական պարտատոմսերի թողարկումից ստացված միջոցների պատասխանատու կառավարմանը:

II. Ֆարմ Կրեդիտ-ի Հանձնառությունը Սոցիալական Ֆինանսավորմանը

Ա. Կոոպերատիվ ինքնություն և սոցիալական առաքելություն

Ֆարմ Կրեդիտ Արմենիա-ն Հայաստանի միակ կոոպերատիվ վարկային կազմակերպությունն է, որը գործում է իրական կոոպերատիվ սկզբունքների հիման վրա: Որպես անդամ-փայատերերին պատկանող ֆինանսական կառույց՝ Ֆարմ Կրեդիտ -ի վարկառուները միաժամանակ նրա անդամ-փայատերերն են, ինչն ապահովում է կոոպերատիվի գործունեության լիակատար ներդաշնակությունը գյուղական համայնքների երկարաժամկետ շահերին:

Հիմնադրման օրվանից Ֆարմ Կրեդիտ-ը որդեգրել է Հայաստանի գյուղական բնակավայրերում կյանքի որակի բարելավման առաքելությունը՝ տրամադրելով հասանելի, պատասխանատու և մատչելի ֆինանսական ծառայություններ ֆերմերներին, ագրոբիզնեսներին, գյուղական ՓՄՁ-ներին և թերի սպասարկվող բնակչությանը: Իր կոոպերատիվ մոդելի միջոցով Ֆարմ Կրեդիտ-ը ձգտում է ամրապնդել գյուղական կենսամակարդակը, բարելավել ֆինանսական ներառականության մակարդակը և նպաստել գյուղատնտեսության և տնտեսության կայուն զարգացմանը:

Սոցիալական պարտատոմսերի այս Հայեցակարգն արտացոլում է Ֆարմ Կրեդիտ-ի երկարաժամկետ հանձնառությունը պատասխանատու ֆինանսավորմանը և նպաստում է կազմակերպության 2026–2028 ռազմավարությամբ սահմանված առաջնահերթությունների իրականացմանը:

Բ. Հիմնական սոցիալական հանձնառություններ

Ֆարմ Կրեդիտ -ի հիմնական սոցիալական հանձնառություններն ընկած են կազմակերպության վարկավորման ռազմավարության, պրոդուկտների մշակման և ինստիտուցիոնալ առաջնահերթությունների հիմքում: Այս հանձնառությունները հիմք են հանդիսանում սույն Հայեցակարգի ներքո ֆինանսավորվող «Որակավորված սոցիալական ծրագրերին (ESP) ընտրության համար և փաստում են Ֆարմ Կրեդիտ -ի երկարամյա ներդրումը՝ պատասխանատու և ներառական ֆինանսավորման ոլորտում: Ներկայացված ծրագրերը արտացոլում են Կազմակերպության գործող բիզնես-մոդելը և նախաձեռնված չեն հատուկ սույն Հայեցակարգի շրջանակներում:

Հիմնական սոցիալական հանձնառություն	Հանձնառության ապացույց
Աջակցություն երիտասարդ ֆերմերներին և ձեռնարկատերերին	Ֆարմ Կրեդիտ-ի վարկային պորտֆելի մոտ 30%-ը տրամադրվում է 21-35 տարեկան երիտասարդ վարկառուներին:
Կանանց տնտեսական հզորացում	Վարկային պորտֆելի մոտ 77%-ը համապատասխանում է 2X Challenge չափանիշներին:
Գյուղական համայնքներում ֆինանսական ներառման ընդլայնում	Ֆարմ Կրեդիտ-ն ակտիվ գործունեություն է ծավալում վեց մարզերում՝ սպասարկելով գյուղական և գյուղատնտեսական համայնքներին:
Աջակցություն գյուղատնտեսական արտադրողականությանը	Հիմնադրման օրվանից ի վեր տրամադրվել է ավելի քան 500 գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների լիզինգ:
Պատասխանատու ֆինանսավորում և հաճախորդների պաշտպանություն	MFR-ի կողմից տրամարդվող Հաճախորդների Պաշտպանության Ոսկե մակարդակի հավաստագրումը հաստատում է Ֆարմ Կրեդիտ-ի հավատարմությունը պատասխանատու վարկավորման և հաճախորդների պաշտպանության ստանդարտներին:
ESG (ԾՄՍ) ինտեգրում	sBB+ Սոցիալական և Բնապահպանական վարկանիշը վկայում է Ֆարմ Կրեդիտ -ի կառավարման և վարկավորման մեջ բնապահպանական և սոցիալական գործոնների արդյունավետ ներդրման մասին:

Գ. Գործընկերներ և ճանաչում

Ֆարմ Կրեդիտ-ը երկարաժամկետ համագործակցություն է հաստատել միջազգային առաջատար ֆինանսական հաստատությունների և ազդեցության ներդրողների (impact investors) հետ՝ վերահաստատելով իր վարկունակությունը և զարգացման գործում ունեցած ազդեցությունը.

Գործընկերներ	Գործընկերներ
Զարգացման ֆինանսական հաստատություններ (DFI)	Համաշխարհային բանկ, IFAD, ADB, EIB, KfW Development Bank, AFD / PROPARCO
Ազդեցության ներդրողներ և հիմնադրամներ	Symbiotics, Incofin Investment Management, responsAbility Investments AG, EFSE, FS Impact Finance, Bank im Bistum Essen, MCE Social Capital
Կապիտալի շուկայի ֆինանսավորում	Նախկին թողարկումներ Հայաստանի կապիտալի շուկայում
Տեխնիկական աջակցության գործընկերներ	USDA, ԱՄՆ Farm Credit System, ADG, Sparkasse Dresden

Դ. Սոցիալական պարտատոմսերի թողարկման հիմնավորումը

Հայաստանի գյուղատնտեսությունը, չնայած շարունակական աճին, բախվում է ֆինանսավորման հասանելիության շարունակական մարտահրավերների: 2025 թ.-ին գյուղատնտեսության համախառն արտադրանքը հասել է 1,057 մլրդ ՀՀ դրամի՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.6%-ով[1]: Գյուղատնտեսությունը շարունակում է մնալ Հայաստանի տնտեսության առանցքային ճյուղերից մեկը՝ կազմելով ՀՆԱ-ի 7.9%-ը: Ընդ որում շուրջ 317,000 գյուղացիական տնտեսություններ արտադրում են գյուղատնտեսական ընդհանուր արտադրանքի ավելի քան 90%-ը[2]: Զարգացման ֆինանսական հաստատությունները շարունակում են դիտարկել փոքր ֆերմերների, կին ձեռներեցների և գյուղական ՓՄՁ-ների համար ֆինանսների հասանելիությունը որպես զարգացման կարևոր մարտահրավեր՝ ընդգծելով գյուղական համայնքներն սպասարկող մասնագիտացված ֆինանսական կազմակերպությունների անհրաժեշտությունը:

Ֆարմ Կրեդիտ-ի Սոցիալական պարտատոմսերի միջոցով հասցեագրվող հիմնական կառուցվածքային մարտահրավերները

Մարտահրավեր	Ոլորտ / ուղղություն	Ֆարմ Կրեդիտ -ի ներդրումը
Շուկայում ֆերմերներին ֆինանսավորման հասանելիության խոչընդոտներ	Սոցիալական / Տնտեսական	Գյուղատնտեսական ֆինանսավորման համապարփակ հասանելիություն
Կայուն պարենային արտադրության պակաս (պարենի ներմուծումից բարձր կախվածություն ունեցող երկիր)	Տնտեսական / պարենային անվտանգություն	Աջակցություն ավելի հուսալի տեղական պարենային մատակարարման ապահովմանը
Գյուղական վայրերում գործազրկություն[3]	Սոցիալական / Տնտեսական	Գյուղական ՄՓՄՁ-ների աջակցություն

[1] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնաբուծության համախառն արտադրանքը, 2025 թ

[2] Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Գյուղատնտեսության ոլորտի ակնարկ, 2025 թ.

[3] https://armstat.am/en/?nid=699&ind_id=8.5.2

Ինչու է Ֆարմ Կրեդիտ-ը թողարկում սոցիալական պարտատոմս

Սույն Հայեցակարգի շրջանակներում սոցիալական պարտատոմսերի թողարկումը նպատակ ունի.

- ընդլայնել Ֆարմ Կրեդիտ-ի առկա սոցիալական ազդեցությունը գյուղական վայրերում
- դիվերսիֆիկացնել Ֆարմ Կրեդիտ-ի ֆինանսավորման աղբյուրները Հայաստանի կապիտալի շուկայի միջոցով.
- բարձրացնել տեղական արժույթով երկարաժամկետ ֆինանսավորման հասանելիությունը «Որակավորված սոցիալական ծրագրերիե համար» (ESP);
- ընդլայնել փոքր ֆերմերների, գյուղական ՄՓՄՁ-ների և ագրոբիզնեսների ֆինանսավորումը.
- ֆինանսական միջոցների տեղաբաշխման և ազդեցության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման միջոցով բարձրացնել թափանցիկությունը ՝ ԿՇՄԱ (ICMA) Սոցիալական Պարտատոմսերի Սկզբունքների (2025) համապատասխան.
- ընդլայնել Ֆարմ Կրեդիտ-ի հասանելիությունն ազդեցությանն ուղղված ներդրողների շրջանում:

Հետևաբար, սոցիալական պարտատոմսերի թողարկումը Ֆարմ Կրեդիտ-ի գործող բիզնես մոդելի և ֆինանսավորման ռազմավարության բնական շարունակությունն է, որը հնարավորություն է տալիս կոոպերատիվին հետագայում ընդլայնել իր սոցիալական ազդեցությունը՝ դիվերսիֆիկացնելով ֆինանսավորման աղբյուրները Հայաստանի կապիտալի ներքին շուկայի միջոցով: Սույն Հայեցակարգի ներքո թողարկված Սոցիալական պարտատոմսերի միջոցները կհատկացվեն բացառապես III.A կետում նկարագրված «Որակավորված սոցիալական ծրագրերին»:

III. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
Ֆարմ Կրեդիտ-ի Հայեցակարգում

Ֆարմ Կրեդիտ-ի սոցիալական պարտատոմսերի Հայեցակարգը համահունչ է ԿՇՄԱ (ICMA) Սոցիալական Պարտատոմսերի Սկզբունքներին և հիմնվում է դրա չորս հիմնասյուների վրա.

1	2	3	4
Միջոցների օգտագործում	Ծրագրի գնահատման և ընտրության գործընթաց	Միջոցների կառավարում	Հաշվետվություն

Սոցիալական պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկումից ներգրավված միջոցներին համարժեք գումարն ուղղվելու է բացառապես նոր կամ գործող վարկերի ու ծրագրերի ամբողջական կամ մասնակի ֆինանսավորմանը և/կամ վերաֆինանսավորմանը, որոնք որակվում են որպես Որակավորված Սոցիալական Ծրագրեր (ESP), ինչպես սահմանված է սույն Հայեցակարգում: Որակավորված Սոցիալական Ծրագրերն ընտրվել են՝ հաշվի առնելով դրանց ակնկալվող ներդրումը Հայաստանի ֆինանսական ներառականության, գյուղական զարգացման և կայուն տնտեսական աճի ապահովման գործում՝ ԿՇՄԱ (ICMA) Սոցիալական պարտատոմսերի սկզբունքներին համահունչ:

Ա. Միջոցների օգտագործում

Հետևյալ վարկերի կատեգորիաները սահմանվել են Որակավորված սոցիալական ծրագրերի (ESP) կատեգորիաներ, որոնք արտացոլում են Ֆարմ Կրեդիտ-ի հիմնական վարկավորման ուղղությունները և դրանց համապատասխանությունը ԿՇՄԱ (ICMA) Սոցիալական Պարտատոմսերի Սկզբունքներին (SBP): Ֆարմ Կրեդիտ-ը ակնկալում է, որ տեղաբաշխված միջոցների մոտ 70%-ը կուղղվի գյուղատնտեսական վարկավորմանը, 20%-ը՝ գյուղական ՄՓՄՁ-ների և ագրոբիզնեսների ֆինանսավորմանը, իսկ 10%-ը գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգին: Փաստացի բաշխումները կարող են տարբերվել և կներկայացվեն տարեկան հաշվետվություններում:

1. Գյուղատնտեսական վարկ փոքր ֆերմերներին

ICMA Կատեգորիաներ. *Սոցիալ-տնտեսական առաջընթաց և հզորացում; Պարենային անվտանգություն*

Ֆինանսավորման տեսակը և իրավասության չափանիշները

- Գյուղատնտեսական վարկեր ուղղված մշակաբույսերի արտադրությանը, անասնապահությանը, խաղողագործությանը, այգեգործությանը և Հայաստանի գյուղական բնակավայրերի փոքր ֆերմերների այլ որակյալ գյուղատնտեսական գործունեությանը, որոնց մայր գումարի սկզբնական չափը վարկի հաստատման պահին չի գերազանցում 35,000 ԱՄՆ դոլարը կամ դրան համարժեք ՀՀ դրամը:

Թիրախային բնակչություն՝ Հայաստանի գյուղական շրջանների ֆերմերներ, ներառյալ երկրորդ սերնդի և կին ֆերմերները, ովքեր շուկայի համար արտադրում են գյուղատնտեսական արտադրանք և ապավինում են սեզոնային գյուղատնտեսական եկամտին:

Սոցիալական առավելություններ. ապահովել փոքր ֆերմերների համար հավասար ֆինանսավորմանը հասանելիություն՝ առանց ֆորմալ վարկային շուկաներում առկա համակարգային խոչընդոտների, ինչը նպաստում է պարենային անվտանգությանը և նպաստում է **ավելի հուսալի տեղական պարենային մատակարարմանը:** Այն բարելավում է **գյուղատնտեսական ֆինանսավորման համապարփակ հասանելիությունը**՝ առաջարկելով մարման ժամանակացույցեր, որոնք հարմարեցված են սեզոնային արտադրական ցիկլերին և բերքահավաքից կամ գյուղատնտեսական վաճառքից ակնկալվող եկամուտներին՝ հիմնվելով ոչ թե աշխատավարձի, այլ դրամական հոսքերի ցիկլերի վրա:



2. Գյուղական ՄՓՄՁ և ագրոբիզնեսի ֆինանսավորում

ICMA Կատեգորիաներ. *Աշխատատեղերի ստեղծում; Պարենային անվտանգություն*

Ֆինանսավորման տեսակը և իրավասության չափանիշները

- Վարկեր՝ Հայաստանի գյուղական շրջաններում գործող միկրո, փոքր ու միջին ձեռնարկություններին, ներառյալ երկրորդային գյուղատնտեսությանը՝ վերամշակված սննդամթերքի արտադրությանը, առևտրին և հարակից գործունեությանը: Իրավասու փոխառուները կարող են ներառել ագրոբիզնեսներ և գյուղատնտեսական արժեքների շղթայի մասնակիցներ, որոնք ներգրավված են կաթնամթերքի արտադրության, պահածոների արտադրության, ալրաղացման , չրերի արտադրության, գինեգործության և հարակից ծառայություններում: Յուրաքանչյուր իրավասու վարկի սկզբնական մայր գումարը չի կարող գերազանցել 100,000 ԱՄՆ դոլարը կամ դրան համարժեք ՀՀ դրամը:

Թիրախային բնակչություն. գյուղական ՄՓՄՁ-ների սեփականատերեր, ներառյալ ագրոբիզնեսները և գյուղատնտեսական արժեշղթայի մասնակիցներ, որոնք համապատասխանում են վերոնշյալ չափանիշներին:
Սոցիալական առավելություններ. Ֆինանսավորման նպատակն է **նպաստել տեղական աշխատատեղերի ստեղծմանը և պահպանմանը**, ինչպես նաև գյուղական համայնքներում տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը: Ագրոբիզնեսների և գյուղատնտեսական արժեշղթայի մասնակիցների ֆինանսավորումը նաև ամրապնդում է գյուղատնտեսական արտադրությունը, վերամշակումը, պահեստավորումը և բաշխումը: Ֆինանսավորվող գործունեությունն աջակցում է պարենային համակարգերին, որը նպաստում է ավելի **հուսալի տեղական պարենային մատակարարմանը և պարենային անվտանգությանը:**



3. Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգ

ICMA Կատեգորիաներ. *Պարենային անվտանգություն;*

Ֆինանսավորման տեսակը և իրավասության չափանիշները

- Գյուղատնտեսական մեքենաների, վերամշակող սարքավորումների և հարակից գործիքների համար, որը տրամադրվում է ֆերմերներին, ագրոբիզնեսներին և գյուղական ՓՄՁ-ներին, որոնք համապատասխանում են սույն Հայեցակարգով սահմանված իրավասության չափանիշներին: Այս սարքավորումները պետք է օգտագործվեն հիմնականում գյուղատնտեսության, արտադրության, վերամշակման, պահեստավորման կամ այլ հարակից գործունեության համար:

Թիրախային բնակչություն. Ֆերմերներ, գյուղական ՓՄՁ-ներ և ագրոբիզնեսներ:
Սոցիալական առավելություններ. Լիզինգը իրավասու ֆերմերներին և ՓՄՁ-ներին հնարավորություն է տալիս ձեռք բերել արտադրողական սարքավորումներ՝ առանց դրանց ամբողջական գնման արժեքը նախապես վճարելու և առանց լրացուցիչ գրավի: Սա ֆերմերներին հնարավորություն է տալիս բարձրացնել իրենց արտադրողականությունը, գործառնական արդյունավետությունը և եկամուտ ստեղծելու կարողությունը, ինչի արդյունքում ավելանում է գյուղատնտեսական արտադրանքի ծավալը **և ամրապնդվում է պարենային անվտանգությունը:**



Թիրախային բնակչություն

Սոցիալական պարտատոմսերի միջոցները մասնավորապես ուղղվելու են հետևյալ գյուղական թիրախային խմբերին:

Թիրախային բնակչություն	Սահմանում / Համապատասխանության չափանիշներ
Փոքր ֆերմերներ	Հայաստանի գյուղական մարզերի ֆերմերներ, ներառյալ երկրորդ սերնդի և կին ֆերմերները, ովքեր շուկայի համար արտադրում են գյուղատնտեսական արտադրանք և ապավինում են սեզոնային գյուղատնտեսական եկամտին, և որոնց մայր գումարի սկզբնական չափը վարկի հաստատման պահին չի գերազանցում 35,000 ԱՄՆ դոլարը կամ դրան համարժեք ՀՀ դրամը:
Գյուղական ՄՓՄՁ-ներ և Ագրոբիզնեսներ	Գյուղական միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների սեփականատերեր, ներառյալ ագրոբիզնեսները և գյուղատնտեսական արժեշղթայի մասնակիցները, որոնք համապատասխանում են վերոնշյալ չափանիշներին, և որոնց մայր գումարի սկզբնական չափը վարկի հաստատման պահին չի գերազանցում 100,000 ԱՄՆ դոլարը կամ դրան համարժեք ՀՀ դրամը::
Ֆերմերներ, գյուղական ՓՄՁ-ներ և ագրոբիզնեսներ Ֆինանսական լիզինգի նպատակով	Ֆերմերներ, ագրոբիզնեսներ և գյուղական ՓՄՁ-ներ, որոնց անհրաժեշտ է սարքավորումների լիզինգ՝ հիմնականում գյուղատնտեսության, արտադրության, շինարարության, վերամշակման, պահեստավորման կամ այլ հարակից գործունեության մեջ օգտագործելու համար:

Համապատասխանեցում ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին (SDG) - ԿԶՆ

Որակավորված սոցիալական ծրագրերի կատեգորիաները նպաստում են Ֆարմ Կրեդիտ-ի Կայուն զարգացման առաջնահերթ նպատակներին, ԿԶՆ 2-ին և 8-ին, ինչպես ամփոփված է ստորև:

ԿԶՆ	Նպատակ	Ֆարմ Կրեդիտ-ի ներդրում
ԿԶՆ 2	Ապահովել պարենային անվտանգություն և բարելավված սնուցում, ինչպես նաև խթանել կայուն գյուղատնտեսությունը	Աջակցություն կայուն գյուղատնտեսությանը և ավելի հուսալի տեղական պարենային մատակարարմանը
ԿԶՆ 8	Խթանել շարունակական, ներառական և կայուն տնտեսական աճը, լիարժեք և արտադրողական զբաղվածությունը և արժանապատիվ աշխատանքը բոլորի համար	Հայաստանի գյուղական մարզերում միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների սեփականատերերի ֆինանսավորում, ներառյալ երկրորդային գյուղատնտեսությունը՝ վերամշակված սննդամթերքի արտադրությունը, առևտուրը և հարակից գործունեությունը, ինչը նպաստում է տեղական աշխատատեղերի ստեղծմանը և պահպանմանը



Գործունեության և ոլորտների ամբողջական ցանկը, որոնք բացահայտորեն բացառվում են Սոցիալական պարտատոմսերի միջոցներով ֆինանսավորվելուց, ներկայացված է Հավելված Ա-ում՝ Բացառման չափանիշներ բաժնում:

Բ. Ծրագրի գնահատման և ընտրության ընթացակարգ

Ընդհանուր նկարագիր

Ֆարմ Կրեդիտ-ը կիրառում է վարկերի ձևավորման, տեղաբաշխման և հաստատման հստակ գործընթաց՝ ապահովելու Սոցիալական պարտատոմսերի միջոցներով ֆինանսավորվող վարկերի համապատասխանությունը սույն Հայեցակարգով սահմանված իրավասության չափանիշներին: Գնահատման գործընթացը համապատասխանում է Ֆարմ Կրեդիտ-ի հաստատված վարկային քաղաքականությանը, պատասխանատու վարկավորման գործելաոճին և ներքին կառավարման ընթացակարգերին, որպեսզի Որակավորված սոցիալական ծրագրերը չափելի սոցիալական օգուտներ ապահովեն սահմանված թիրախային խմբերի համար:

Որակավորման գնահատման ընթացակարգ

Քայլ	Փուլ	Նկարագրություն
1	Որակավորված սոցիալական Ծրագրերի (ESP) կատեգորիայի ստուգում	Վարկային մասնագետները գնահատում են, թե արդյոք առաջարկվող ֆինանսավորումը համապատասխանում է սույն Հայեցակարգում սահմանված մեկ կամ մի քանի Որակավորված սոցիալական ծրագրերի կատեգորիաներին, որոնք աջակցվում են Ֆարմ Կրեդիտ-ի կառավարման տեղեկատվական համակարգի (MIS) միջոցով:
2	Թիրախային բնակչության նույնականացում	Վարկառուի իրավասությունը գնահատվում է ըստ թիրախային բնակչության կիրառելի չափանիշների: Աջակցող փաստաթղթերը ձեռք են բերվում և պահպանվում Ֆարմ Կրեդիտ-ի ներքին ընթացակարգերին համապատասխան:
3	Բացառման չափանիշների ստուգում	Վարկային մասնագետները և վարկային կոմիտեն ստուգում են, որ առաջարկվող գործունեությունը չի պատկանում որևէ բացառող կատեգորիայի: Ճանաչիր Հաճախորդիդ (KYC) ընթացակարգը, ներառյալ պատժամիջոցների ստուգումը, կիրառվում է ամբողջությամբ:
4	Վարկային ռիսկի գնահատում	Կիրառվում է ստանդարտ վարկային ապահովագրություն, ներառյալ դրամական միջոցների հոսքերի վերլուծությունը գրավի գնահատում, պարտքի սպասարկման կարողությունների և վարկային պատմության վերանայում, որը աջակցվում է Ֆարմ Կրեդիտ-ի վարկային գնահատման ներքին մեթոդաբանությամբ:
5	Վարկային կոմիտեի հաստատում	Նշված շեմերից բարձր բոլոր վարկերը հաստատվում են Վարկային կոմիտեի կողմից: Չորս աչքերի սկզբունքը կիրառվում է բոլոր վարկային որոշումների համար:
6	Որակավորված սոցիալական Ծրագրերի (ESP) հատկորոշում տեղեկատվական համակարգերում (MIS)	Հաստատված իրավասու վարկերը Ֆարմ Կրեդիտ-ի տեղեկատվական համակարգերում սահմանվում են որպես սոցիալական պարտատոմսերի համապատասխան՝ ունենալով ESP կատեգորիայի, թիրախային բնակչության և ԿԶՆ-ի հաշվետվություններ:
7	Շարունակական մոնիտորինգ	Եթե ակտիվն այլևս չի համապատասխանում իրավասության չափանիշներին, Ֆարմ Կրեդիտ-ն անհապաղ պետք է հեռացնի այն Որակավորված սոցիալական պորտֆելից և փորձի փոխարինել մեկ այլ Որակավորված սոցիալական նախագծով 90 օրացուցային օրվա ընթացքում:

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարում

Բոլոր որակավորված վարկերը, Որակավորված սոցիալական պորտֆելում իրենց ներառման ընթացքում, ենթարկվելուն են Ֆարմ Կրեդիտ-ի բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման կիրառելի

ընթացակարգերին: Ֆարմ Կրեդիտ-ը գնահատելու է համապատասխան բնապահպանական, սոցիալական, իրավական և հեղինակության ռիսկերը, ներառյալ բնապահպանական օրենսդրության, աշխատանքային և մարդու իրավունքների պահանջների, հողօգտագործման սահմանափակումների և առողջության ու անվտանգության կիրառելի չափանիշների պահպանումը:

Սոցիալական պարտատոմսերի կառավարման համակարգը (կառուցվածքը)

Ստեղծվելու է հատուկ Սոցիալական պարտատոմսերի աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով և պարտականություններով.

Նախագահ	Գլխավոր գործադիր տնօրեն / Նախագահ
Անդամներ	Ֆինանսական Տնօրեն, Վարկային Տնօրեն, Գործառնական Տնօրեն և ESG/համապատասխանության պատասխանատու Անկախ դիտորդ՝ Ներքին աուդիտի բաժնի ղեկավար
Հաճախականություն	Առնվազն տարեկան, կամ ավելի հաճախ՝ ըստ պահանջի
Պարտականություններ	Հաստատել ESP որակավորման չափանիշների թարմացումները, վերանայել որակավորված վարկային պորտֆելը, հաստատել տեղաբաշխման և ազդեցության հաշվետվությունները, վերահսկել սույն Հայեցակարգի պահպանումը
Էսկալացիա (հարցերի բարձրացում)	Էական հարցերը ներկայացնել Տնօրենների խորհրդին

Սոցիալական պարտատոմսերի աշխատանքային խումբը կարող է նաև վերանայել ցանկացած էական բնապահպանական, սոցիալական, կառավարման, իրավական կամ հեղինակության հետ կապված մտահոգություններ, որոնք վերաբերում են Որակավորված սոցիալական պորտֆելում ընդգրկված ակտիվներին և որոշել, թե արդյոք այդպիսի ակտիվները պետք է մնան իրավասու՝ սույն Հայեցակարգի համաձայն:

ESP-ի հետ համապատասխանության պատասխանատվություն

Վարկային տնօրենը պատասխանատու է «Որակավորված սոցիալական պորտֆելումե ընդգրկված ակտիվների՝ սույն Հայեցակարգում սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար:

Ֆինանսական տնօրենը պատասխանատու է Սոցիալական պարտատոմսերի միջոցների բաշխման, տեղաբաշխման և ազդեցության հաշվետվությունների պատրաստման համար:

Ներքին աուդիտի գործառույթը կմնա անկախ որակավորված ակտիվների գործառնական ընտրությունից և տեղաբաշխումից: Ներքին աուդիտի ղեկավարը կարող է մասնակցել հանդիպումներին որպես քվեարկությանը չմասնակցող դիտորդ և կարող է պարբերաբար վերանայել վերահսկողության ձևավորումն ու արդյունավետությունը, բաշխման գործընթացը և համապատասխանությունը սույն Հայեցակարգին:

Վարկային տնօրենը և Ֆինանսական տնօրենը պարբերաբար վերանայելու են «Որակավորված սոցիալական պորտֆելըե՝ հաստատելու համար դրա շարունակական համապատասխանությունը սույն Հայեցակարգով սահմանված որակավորման չափանիշներին և ապահովելու, որ «Որակավորված սոցիալական պորտֆելիե ընդհանուր մնացորդը հավասար լինի կամ գերազանցի Սոցիալական պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող միջոցների ծավալը:

Գ. Միջոցների կառավարում

Մոնիտորինգի և հաշվառման մեխանիզմը

Ֆարմ Կրեդիտ-ն իր Կառավարման տեղեկատվական համակարգում (MIS) կվարի հատուկ հաշվառում՝ վերահսկելու Սոցիալական պարտատոմսերի միջոցներների և Որակավորված սոցիալական Պորտֆելի («ESP պորտֆելե) բաշխումը, որի ընդհանուր մնացորդը առնվազն հավասար կլինի շրջանառության մեջ գտնվող բոլոր Սոցիալական պարտատոմսերի զուտ միջոցներին: ESP Պորտֆելը վարկի ամբողջ ժամկետի ընթացքում կհսկվի առանձին հաշվետվությամբ, որը կներառի՝ վարկի ID; վարկի գումարը և արժույթը; վճարման ամսաթիվը և ժամկետը. ESP կատեգորիա; թիրախային բնակչության դասակարգում; գործունեության մարզ; և չմարված մնացորդը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Միջոցների տեղաբաշխումը

Սոցիալական պարտատոմսերի թողարկումից ստացված միջոցները կհատկացվեն Որակավորված սոցիալական ծրագրերի ֆինանսավորմանը՝ պորտֆելային համամասնությամբ: Ֆարմ Կրեդիտ-ը վարում է շրջանառու (վերականգնվող) վարկային պորտֆել, ինչը նշանակում է, որ առանձին վարկերի մարմանը զուգընթաց ազատված միջոցները վերաուղղվում են նոր համապատասխան վարկերի ֆինանսավորմանը՝ ապահովելով շարունակաբար թարմացվող ESP պորտֆելի պահպանումը:

Բաշխման/տեղաբաշխման գործընթացը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- Ամբողջական տեղաբաշխում. Ֆարմ Կրեդիտ-ը մտադիր է Սոցիալական պարտատոմսերի թողարկումից ստացված զուտ միջոցներին համարժեք գումար ամբողջությամբ հատկացնել Որակավորված սոցիալական պորտֆելին ՝ թողարկումից 12 ամսվա ընթացքում (ոչ ուշ, քան 18 ամիս):
- Հետադարձ ժամկետ (Look-back provision) . Ֆարմ Կրեդիտ-ը կարող է կիրառել մինչև 24 ամսվա վաղեմության ժամկետ գործող որակավորված վարկերի վերաֆինանսավորման համար՝ պայմանով, որ վարկը տրամադրված լինի պարտատոմսերի թողարկման ամսաթվին նախորդող 24 ամսվա ընթացքում:
- Ժամանակավոր ներդրում. Մինչև ամբողջական տեղաբաշխումը, չբաշխված միջոցներները կպահվեն դրամական միջոցներով, դրամական միջոցների համարժեքներով կամ կներդրվեն կարճաժամկետ, իրացվելի գործիքներում՝ Ֆարմ Կրեդիտ-ի իրացվելիության կառավարման քաղաքականությանը համապատասխան:
- Պորտֆելի պահպանում. Ֆարմ Կրեդիտ-ն ապահովելու է, որ ESP պորտֆելի ընդհանուր չմարված մնացորդը միշտ հավասար լինի կամ գերազանցի Սոցիալական պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող միջոցների ընդհանուր ծավալը

Չտեղաբաշխված միջոցների կառավարումը

Եթե որևէ պահի առաջանան չտեղաբաշխված միջոցներ (որակավորված վարկերի վաղաժամկետ մարման կամ այլ պատճառներով), Ֆարմ Կրեդիտ-ը պետք է նման միջոցները հատկացնի Որակավորված սոցիալական ծրագրերին, որքան հնարավոր է շուտ և անհրաժեշտության դեպքում չտեղաբաշխված մնացորդը ժամանակավորապես կպահի դրամային կամ դրան համարժեք միջոցներով , կարճաժամկետ իրացվելի այլ գործիքներով՝ Կազմակերպության իրացվելիության կառավարման քաղաքականության համաձայն:

Ոչ որակավորված ակտիվների փոխարինումը

Եթե «Որակավորված սոցիալական պորտֆելումե ներառված ակտիվն այլևս չի համապատասխանում սույն Հայեցակարգով սահմանված որակավորման չափանիշներին, ՖԿԱ-ն կհեռացնի այն պորտֆելից և կձգտի ողջամիտ ժամկետում փոխարինել մեկ այլ «Որակավորված սոցիալական ծրագրովե:

Յուրաքանչյուր որակավորված վարկ շրջանառության մեջ գտնվող Սոցիալական պարտատոմսերի զուտ հասույթի դիմաց կտեղաբաշխվի միայն մեկ անգամ: Վարկը, որը համապատասխանում է «Որակավորված սոցիալական ծրագրերիե մեկից ավելի կատեգորիաների, կարող է վերագրվել մեկ հիմնական տեղաբաշխման կատեգորիայի և միևնույն ժամանակ նույնականացվել թիրախային բնակչության լրացուցիչ ցուցանիշներով: Այնուամենայնիվ, դրա մնացորդային գումարը «Որակավորված սոցիալական պորտֆելիե ընդհանուր հաշվարկում մեկից ավելի անգամ չի հաշվարկվի:

Դ. Հաշվետվողականություն

Ելնելով կիրառելի օրենքներից, կանոնակարգերից և տվյալների առկայությունից՝ Ֆարմ Կրեդիտ-ը մտադիր է չմարված պարտատոմսերի ողջ ժամկետի ընթացքում հրապարակել տարեկան հաշվետվություն պարտատոմսերի միջոցների բաշխման և պորտֆելի սոցիալական ազդեցության վերաբերյալ: Հաշվետվությունները հանրությանը հասանելի կլինեն Ֆարմ Կրեդիտ-ի պաշտոնական կայքում:

Տեղաբաշխման վերաբերյալ հաշվետվություն

Ֆարմ Կրեդիտ-ը կհրապարակի տեղաբաշխման և ազդեցության տարեկան հաշվետվություն Սոցիալական Պարտատոմսերի գործողության ընթացքում: Տեղաբաշխման հաշվետվությունը ներառելու է.

Բացահայտման կետ	Մանրամասներ
Հավաքագրված ընդհանուր զուտ միջոցները	Ըստ պարտատոմսերի շարքի և արժույթի
ESP պորտֆելին հատկացված ընդհանուր գումարը	Բացարձակ մեծությամբ և միջոցների տոկոսով
Չտեղաբաշխված գումարներ	Օգտագործված գումարը և ժամանակավոր ներդրումային գործիքները
Բաշխում ըստ ESP կատեգորիայի	Յուրաքանչյուր կատեգորիայի համար հատկացված գումարը և վարկերի քանակը
Բաշխում ըստ թիրախային բնակչության	% Հայաստանի գյուղական մարզերի ֆերմերներ, % գյուղական ՄՓՄՁ-ներ, % գյուղական ՓՄՁ-ներ
Աշխարհագրական բաշխում	Տեղաբաշխում ըստ մարզերի
Նախկինում տրամադրված վարկերի բաշխում (Look-back)	Վերաֆինանսավորմանը հատկացված միջոցների գումարը և տոկոսը
Բաշխում ըստ արժույթի	ՀՀ դրամ VS ԱՄՆ դոլար տեղաբաշխում

Ազդեցության վերաբերյալ հաշվետվողականություն (Impact Reporting)

Ֆինանսական միջոցների տեղաբաշխման հաշվետվության հետ մեկտեղ (կամ դրա կազմում) Ֆարմ Կրեդիտ-ը կհրապարակի նաև Ազդեցության հաշվետվություն՝ բացահայտելով ESP-ի պորտֆելի կողմից ձեռք բերված սոցիալական արդյունքներն ու ցուցանիշները: Հիմնական չափորոշիչները ներկայացված են ստորև.

ESP կատեգորիա	Ազդեցության ցուցիչ	Միավոր
Գյուղատնտեսական վարկ	Ֆինանսավորված ֆերմերների թիվը	Քանակ
Գյուղատնտեսական վարկ	Հատկացված գյուղատնտեսական վարկերի ծավալը	ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ

ESP կատեգորիա	Ազդեցության ցուցիչ	Միավոր
Գյուղատնտեսական վարկ	Վարկի միջին չափը	USD
Կանանց հնարավորությունների ընդլայնում	Ֆինանսավորված կին վարկառուների թիվը	Քանակ
Կանանց հնարավորությունների ընդլայնում	Կանանց նպատակային վարկավորման ծավալը	ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ
Կանանց հնարավորությունների ընդլայնում	2X Challenge չափանիշներին համապատասխանող պորտֆելի տոկոսը	%
YBS (Երիտասարդ/Սկսնակ/Փոքր) ֆերմերներ	ֆինանսավորվող երիտասարտ, սկսնակ, փոքր ֆերմերների թիվը	Քանակ
YBS (Երիտասարդ/Սկսնակ/Փոքր) ֆերմերներ	21-35 տարեկան վարկառուներին տրամադրած պորտֆելի տոկոսը	%
Գյուղական ՓՄՁ ֆինանսավորում	Ֆինանսավորված գյուղական ՓՄՁ-ների թիվը	Քանակ
Գյուղական ՓՄՁ ֆինանսավորում	Գյուղական աշխատատեղերի ստեղծման աջակցություն	Քանակ
Սարքավորումների լիզինգ	Վարձակալված գյուղատնտեսական գործիքների քանակը	Քանակ
Էներգաարդյունավետություն	Արևային/էներգաարդյունավետության վարկերի քանակը	Քանակ
Էներգաարդյունավետություն	CO_2-ի արտանետումների կրճատում (որտեղ հնարավոր է չափելի)	tCO_2/տարի
Գյուղական բնակարանաշինություն	Վերանորոգման/բնակարանային վարկերի քանակը	Քանակ
Աշխարհագրական ծածկույթ	Ընդգրկված մարզերի թիվը	Քանակ
Աշխարհագրական ծածկույթ	Ընդգրկված գյուղերի/գյուղական համայնքների թիվը	Քանակ

Այն դեպքերում, երբ ուղղակի չափումն անհնար է, Ֆարմ Կրեդիտ-ը կարող է կիրառել ողջամիտ գնահատումներ կամ մոտարկված ցուցանիշներ (proxies): Կիրառված բոլոր ենթադրություններն ու մեթոդաբանությունները կբացահայտվեն համապատասխան Ազդեցության հաշվետվությունում:

IV. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ա. Երկրորդ կողմի եզրակացություն (SPO)

Մինչ սոցիալական պարտատոմսերի առաջին թողարկումը, Ֆարմ Կրեդիտ-ը կստանա Երկրորդ կողմի եզրակացությունը (SPO) Sustainable FITCH վարկանիշային գործակալությունից: Վերջինս կգնահատի այս Հայեցակարգի համապատասխանությունը ԿՇՄԱ (ICMA) Սոցիալական Պարտատոմսերի Սկզբունքներին (2025) , ներառյալ Ֆարմ Կրեդիտ-ի սոցիալական նպատակների գնահատումը և սահմանված Որակավորված սոցիալական ծրագրերի կատեգորիաների համապատասխանությունը:

Այս եզրակացությունը հանրությանը հասանելի կլինի Ֆարմ Կրեդիտ-ի կայքում՝ սույն Հայեցակարգի և հետագա ցանկացած թարմացումների հետ մեկտեղ:

Բ. Առկա ESG գնահատական/վարկանիշ

Ֆարմ Կրեդիտ-ն հետևողականորեն ամրապնդել է իր բնապահպանական, սոցիալական և կառավարման գործելակերպը միջազգայնորեն ճանաչված հավաստագրերի, գործընկերների և կայուն զարգացման նախաձեռնությունների միջոցով՝ ցույց տալով, որ պատասխանատու ֆինանսավորումն արմատավորված է իր բիզնես-մոդելում և կառավարման համակարգում: Ֆարմ Կրեդիտ-ի՝ որպես սոցիալական պարտատոմսերի թողարկողի վստահելիությունը հաստատվում է անկախ արտաքին գնահատումներով.

Ոսկե CPC սերտիֆիկացում	Հաճախորդների պաշտպանության սերտիֆիկացում (Ոսկե մակարդակ) շնորհվել է MFR-ի կողմից 2022 թվականին, թարմացվել է 2025 թ.: Վավերացնում է Ֆարմ Կրեդիտ-ի պատասխանատու վարկավորման, թափանցիկ գնագոյացման, արդար վերաբերմունքի և հաճախորդների պաշտպանության գործելակերպը:
SER վարկանիշ՝ sBB+	SPSP
Երկարատև DFI գործընկերներ	Ֆարմ Կրեդիտ-ի համագործակցության փորձը զարգացման առաջատար ֆինանսական կազմակերպությունների և ազդեցության ներդրողների հետ, այդ թվում՝ Համաշխարհային բանկի, IFAD-ի, EIB-ի, KfW-ի, ԱԶԲ-ի և այլ միջազգային գործընկերների հետ, արտացոլում է երկարամյա վստահությունը կոոպերատիվի կառավարման, վարկավորման գործելակերպի և զարգացման առաքելության նկատմամբ:
ICMA SBP հավասարեցում	Այս Հայեցակարգը մշակվել է ICMA-ի Սոցիալական պարտատոմսերի սկզբունքներ 2025-ի հետ անմիջականորեն համահունչ և հաստատված է Երկրորդ կողմի եզրակացությունով:





Գ. Կառավարում և Հայեցակարգի վերանայում

Հայեցակարգային թարմացումներ

Սույն Հայեցակարգը պարբերաբար կվերանայվի Սոցիալական պարտատոմսերի աշխատանքային խմբի կողմից և անհրաժեշտության դեպքում կթարմացվի՝ արտացոլելու համար.

- ICMA-ի Սոցիալական պարտատոմսերի սկզբունքների կամ դրանց հետ կապված շուկայական ստանդարտների փոփոխությունները,
- Ֆարմ Կրեդիտ-ի վարկավորման ռազմավարության, ապրանքատեսականու կամ թիրախային բնակչության (խմբերի) էական փոփոխությունները,
- Ներդրողների, Երկրորդ կողմի եզրակացություն տրամադրողի կամ կարգավորող մարմինների արձագանքներն ու առաջարկությունները,
- Հայաստանի օրենսդրական դաշտի կամ ՀՀ Կենտրոնական Բանկի պահանջների փոփոխությունները։

Սույն Հայեցակարգի ցանկացած էական փոփոխություն ենթակա է Տնօրենների խորհրդի հաստատմանը և կիրապարակվի Ֆարմ Կրեդիտ-ի պաշտոնական կայքում։ Ֆարմ Կրեդիտ-ը կարող է ստանալ երկրորդ կողմի թարմացված եզրակացություն սույն Հայեցակարգի վերանայումներից հետո։

Խախտում և վերականգնում

Եթե որոշվի, որ ESP Պորտֆելի որևէ վարկ այլևս չի համապատասխանում որակավորման չափանիշներին (վարկառուի գործունեության փոփոխության, բացառման չափանիշների խախտման կամ որևէ այլ պատճառով), Ֆարմ Կրեդիտ-ն կհեռացնի համապատասխան վարկը Որակավորված սոցիալական պորտֆելից և կփոխարինի այն նոր որակավորված վարկով 90 օրացուցային օրվա ընթացքում՝ պորտֆելի մնացորդը պահպանելու համար։ Հաջորդ տեղաբաշխման հաշվետվության մեջ, անհրաժեշտության դեպքում կբացահայտի Ոևակավորված սոցիալական պորտֆելի վրա ազդող ցանկացած էական փոփոխություն և կծանուցի այն Սոցիալական պարտատոմսերի կոմիտեին և, իսկ եթե փոփոխությունը էական է՝ Տնօրենների խորհրդին։

Իրավական ժխտում (Disclaimer)

Սույն Հայեցակարգը որևէ իրավական պարտավորություն չի ստեղծում Ֆարմ Կրեդիտ-ի համար սոցիալական պարտատոմսեր թողարկել։ Սոցիալական պարտատոմսերի թողարկման ցանկացած պայման կկարգավորվի բացառապես համապատասխան փաստաթղթերով։ Սույն Հայեցակարգի և պարտատոմսերի փաստաթղթերի միջև որևէ անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է պարտատոմսերի վերաբերյալ փաստաթղթերին։

V. Հաճախորդների Տնտեսությունների Նկարագիր

Հաճախորդի անունը՝ Վ. Մ.
Ծաղկի և դիզայնի սրահ՝ Mkrtchyan Flowers

Վ. Մ.-ն հայ եռանդուն կին ձեռնարկատեր է, ով իր բիզնեսը կառուցել է բացառապես նվիրումի, ստեղծագործ մտքի և համարձակության շնորհիվ: Այն, ինչ տարիներ առաջ սկսվել էր որպես շատ փոքր նախաձեռնություն՝ ֆինանսավորվելով ընտանեկան բնակարանի վաճառքից ստացված միջոցներով, այսօր վերածվել է համայնքում ամենասիրված ծաղկի և միջոցառումների ձևավորման սրահներից մեկի:



Սկսելով փոքր վարձակալած տարածքից՝ Mkrtchyan Flowers սրահի հիմնադիրը աստիճանաբար ընդլայնել է իր ծառայությունները՝ պարզ ծաղկային ձևավորումներից անցնելով միջոցառումների մասնագիտական ձևավորման, ներառյալ հարսանիքներ, ծննդյան արարողություններ և կորպորատիվ միջոցառումներ: Այսօր նա ղեկավարում է ընդարձակ և գեղեցիկ ձևավորված սրահ, չորս աշխատակիցներից (որոնցից 3ը կանայք են) բաղկացած թիմ՝ ստեղծելով առողջ աշխատանքային միջավայր համայնքի երիտասարդ կանանց ներգրավելու համար:

Իր գործունեությունը պահպանելու և հետագայում ընդլայնելու նպատակով Վ.-ն Ֆարմ Կրեդիտ Արմենիայից ստացել է մոտ 5.5 մլն ՀՀ դրամ վարկ՝ 36 ամիս մարման ժամկետով: Ֆինանսավորումը նպաստել է բիզնեսի գործառնությունների ամրապնդմանը, ավելի բարձր որակի մատակարարումների ապահովմանը և ծառայությունների նկատմամբ աճող պահանջարկի բավարարմանը:

Վ.-ի բիզնեսը նաև տեղական արժեշղթայի կարևոր մաս է կազմում: Նա թարմ ծաղիկները ձեռք է բերում անմիջապես ֆերմերներից, որոնցից շատերը նույնպես Ֆարմ Կրեդիտ Արմենիայի հաճախորդներ են՝ աջակցելով տեղական գյուղատնտեսական արտադրողներին և ապահովելով հուսալի ու կայուն մատակարարում:

Վերջերս, որպես ձեռնարկատեր ավելի մեծ վստահություն ձեռք բերելով, Վ.-ն ներդրում է կատարել հողատարածքի ձեռքբերման մեջ և սկսել է նոր շենքի կառուցումը: Այս հողատարածք նախատեսվում է օգտագործել որպես փոքր հյուրանոց կամ վարձակալության տրվող տարածք: Սա ևս մեկ քայլ է ընտանիքի եկամուտների դիվերսիֆիկացման և տեղական տնտեսական ակտիվության խթանման ուղղությամբ:

«Յուրաքանչյուր քայլ մարտահրավեր է եղել, սակայն վճռականության և ճիշտ աջակցության շնորհիվ երազանքները կարող ծաղիկների նման աճել», - նշում է Վ.-ն:

Նրա պատմությունը վառ օրինակ է այն բանի, թե ինչպես կարող է հասանելի և պատասխանատու ֆինանսավորումը հզորացնել կին ձեռնարկատերերին, ստեղծել աշխատատեղեր և ամրապնդել Հայաստանի գյուղական արժեշղթաները:

Հաճախորդի անունը՝ Լ. Կ.
Ժամանակակից ջերմոցային տնտեսություն



2016 թվականին Լ. Կ.-ի համար Արմավիրի մարզի Գայ գյուղում 3,700 քմ ջերմոցային տարածքը ավելին էր քան լոլիկի և ռեհանի շարքեր: Այնտեղ նա տեսնում էր իր ընտանիքի և իր համայնքի ապագան:

Այդ տեսլականը կարճ ժամանակում սկսեց կյանքի կոչվել: Ունենալով հուսալի ֆինանսական գործընկեր՝ Լ.-ն սկսեց վերանորոգումներ կատարել իր հողատարածքում՝ ավելացնելով ժամանակակից հովացման համակարգեր և կատարելագործելով համատեղ մշակության մեթոդները՝ յուրաքանչյուր քառակուսի մետրից առավելագույն արդյունք ստանալու համար: Սեզոն առ սեզոն նրա ջերմոցային տնտեսությունն աճեց՝ հասնելով 16,000 քմ-ի, ինչը ավելի քան չորս անգամ գերազանցում է սկզբնական չափը:

Սակայն իրական պատմությունը միայն թվերի մեջ չէ: Այն 12 ընտանիքների մասին է, որոնք այսօր Լ.-ի շնորհիվ ունեն կայուն աշխատանք: Այն ռեհանի և բանջարեղենի արկղերի մասին է, որոնք այլևս չեն մատակարարվում միայն տեղական շուկային, այլ հատում են սահմանները՝ համապատասխանելով միջազգային արտահանման չափանիշներին: Եվ այն տարեկան 168.5 մլն ՀՀ դրամ հասույթի մասին է, որը վկայում է, թե որքան հեռու կարող է հասցնել վճռականությունը, երբ այն համադրվում է ճիշտ աջակցության հետ:

«Ճիշտ ֆինանսական գործընկերոջ շնորհիվ մենք մեր ընտանեկան բիզնեսը մեծացրինք չորս անգամ՝ ստեղծելով մշտական աշխատատեղեր և հասնելով միջազգային արտահանման չափանիշների», - նշում է Լ.-ն:

Այսօր նրա ջերմոցային տնտեսությունը վկայում է, որ ճիշտ աջակցության դեպքում տեղական ֆերմերային տնտեսությունը կարող է վերածվել միջազգային հաջողության, իսկ մեկ կնոջ համառությունը կարող է փոխել ոչ միայն իր, այլև իրեն շրջապատող մարդկանց կյանքը:



I. ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ-ի ՄԱՍԻՆ	II. ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ	III. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ	IV. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	V. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	VI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

VI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ա. Բացառման չափանիշներ

Հետևյալ գործունեության տեսակներն ու ոլորտները չեն կարող ֆինանսավորվել Սոցիալական պարտատոմսերի միջոցներով՝ անկախ որակավորման այլ չափանիշներից.

- Հարկադիր կամ երեխաների աշխատուժն օգտագործող գործունեություններ
- Զենքի, զինամթերքի կամ ռազմական տեխնիկայի արտադրություն կամ առևտուր
- Ալկոհոլի, ծխախոտի կամ մոլախաղերի գործունեություն
- Շրջակա միջավայրի համար վնասակար գործողություններ՝ անտառահատումներ, ճահճային տարածքների վերափոխում կամ կրիտիկական կենսամիջավայրերի ոչնչացում
- Գործունեություններ, որոնք խտրականություն են սեռի, էթնիկական, կրոնական կամ քաղաքական պատկանելության վրա
- Խոշորածավալ առևտրային ֆերմերային գործառնություններ (վարկի չափը > 100,000 ԱՄՆ դոլար մեկ վարկառուի համար, բացառությամբ ագրոբիզնեսների)
- Սպեկուլյատիվ ֆինանսական գործիքներ կամ սպառողական վարկեր՝ առանց սոցիալական նպատակի բացահայտման
- Վարկեր վարկառուներին պատժամիջոցային ենթակայության տակ գտնվող իրավասություններում կամ միջազգային պատժամիջոցների ցանկում ընդգրկված կազմակերպություններին
- Կոռուպցիա և խարդախություն
- Գործողություններ, որոնք խախտում են գործող բնապահպանական օրենսդրությունը
- Մարդկանց թրաֆիքինգ
- Վայրի բնության ապօրինի առևտուր
- Ապօրինի ծառահատումներ

Բ. 2X Challenge-ին համապատասխանության չափանիշներ

2X իրավասու համարվելու համար ներդրումը պետք է բավարարի հետևյալ հիմնական չափանիշներից առնվազն մեկին.

- **Ձեռնարկատիրություն (սեփականություն և վերահսկողություն).** Բիզնեսը հիմնադրվել է կնոջ կողմից, սեփականության առնվազն 51%-ը պատկանում է կին ձեռնարկատերի , կամ չգրանցված գյուղական ֆերմերային տնտեսությունների դեպքում կինն է հիմնական վարկառուն և ունի փաստաթղթավորված վերահսկողություն ֆերմերային ակտիվների, հողի կառավարման կամ եկամտային հոսքերի նկատմամբ:
- **Առաջնորդություն (կառավարում և կորպորատիվ կառավարում).** Կանայք զբաղեցնում են ավագ կառավարման պաշտոնների առնվազն 35%-ը կամ կազմում են ընտանեկան ֆերմերային տնտեսություններում ակտիվ որոշումներ կայացնող մարմնի առնվազն 35%-ը:
- **Զբաղվածություն (աշխատուժի բազմազանություն)**. Ընդհանուր աշխատուժի առնվազն 45%-ը կազմում են կանայք: Սա կիրառվում է պաշտոնական ՓՄՁ-ների մշտական աշխատակիցների, իսկ գյուղատնտեսական բիզնեսների դեպքում՝ ընտանիքի ակտիվ անդամների և սեզոնային աշխատողների նկատմամբ (վարկի գնահատման ընթացքում տնային տնտեսության հայտարարագրերի միջոցով հաստատմամբ):
- **Մատակարարման շղթա (մատակարարների և շուկայի բազմազանություն).** Վարկառուն ունի կին ղեկավարությամբ գործող մատակարարներից գնումներ կատարելու ձևակերպված հանձնառություն, կամ գործում է որպես գյուղատնտեսական բիզնես, որն ուղղակիորեն մատակարարում է

պաշտոնական ագրոբիզնես վերամշակողի կամ գնորդի, որը համապատասխանում է 2X չափանիշներին։

Գ. Համապատասխանեցում ICMA-ի Սոցիալական պարտատոմսերի սկզբունքներ 2025-ին

ICMA SBP բաղադրիչ	ICMA-ի պահանջ	Ֆարմ Կրեդիտ արձագանքման / Հայեցակարգային բաժին
Միջոցների օգտագործում	Միոցների օգտագործում այն սոցիալական ծրագրերի համար, որոնք ունեն հստակ սոցիալական նպատակներ և դրական սոցիալական արդյունքներ թիրախային խմբերի համար	Բաժին III.A — Սահմանված 7 ESP կատեգորիաներ, որոնք ընդգրկում են գյուղատնտեսությունը, կանանց հզորացումը, Երիտասարդ, սկսնակ և փոքր ֆերմերները, ՓՄՁ-ները, սարքավորումների լիզինգը, գյուղական բնակարանները և էներգաարդյունավետությունը
Ծրագրի գնահատում և ընտրություն	Թողարկողի կողմից սոցիալական նպատակների, իրավասության որոշման գործընթացի և համապատասխան իրավասության չափանիշների նարկայացում	Բաժին III.B. Վարկավորման գործընթացում ներդրված բազմաստիճան ESP զննում ; Սոցիալական պարտատոմսերի աշխատանքային խումբ; բացառման չափանիշներ
Ֆինանսական միջոցների կառավարում	Զուտ միջոցները պետք է մուտքագրվեն ենթահաշիվ կամ հաշվառվեն ներքին համակարգով	Բաժին III.C —Ներքին տեղեկատվական համակարգեր; պորտֆելի վրա հիմնված կառավարում; հետադարձ հայացք(look-back provision); չբաշխված միջոցների քաղաքականություն
Տեղաբաշխման հաշվետվություն	ՖԻնանսական միջոցների տեղաբաշխման տարեկան հաշվետվություն մինչև ամբողջական տեղաբաշխումը	Բաժին III.D. Տարեկան բաշխման հաշվետվություն՝ ըստ կատեգորիայի, թիրախային բնակչության, աշխարհագրության, արժույթի
Ազդեցության հաշվետվություն	Հաշվետվություն սպասվող և ձեռք բերված սոցիալական արդյունքների մասին	Բաժին III.D — 17+ KPI բոլոր ESP կատեգորիաների համար; մեթոդաբանության բացահայտում
Արտաքին վերանայում	Երկրորդ կողմի եզրակացությունն առաջարկում է (խրախուսում է) տեղբաշխման վերաբերյալ հավաստիացումը	Բաժին IV — Երկրորդ կողմի նախնական հրապարակման եզրակացություն և առկա ESG հավաստումները; առկա CPC Gold և sBB+ վարկանիշները

Դ. Ազդեցության հաշվետվողականության ցուցանիշներ

Ստորև ներկայացված ցուցանիշները կրում են ցուցադրական բնույթ և ժամանակի ընթացքում կարող են հստակեցվել Կազմակերպության հաշվետվողականության մեթոդաբանության զարգացմանը համընթաց։ Ֆարմ Կրեդիտը մտադիր է հաշվետվություն ներկայացնել այն ցուցանիշների վերաբերյալ, որոնք արդիական են և որոնց համար առկա են արժանահավատ տվյալներ։

Ցուցանիշ	Կարգավիճակ	Միավոր	Հաշվետվությունների հաճախականությունը
Որակավորված սոցիալական պորտֆելում ակտիվ վարկառուների թիվը	Պորտֆել	Քանակ	Տարեկան
կանանց / 2X Challenge Պորտֆելի %	Սեռ	%	Տարեկան
Ֆինանսավորված կին վարկառուների թիվը	Սեռ	Քանակ	Տարեկան
Երիտասարդ, սկսնակ և փոքր (21-35 տարեկան) ֆերմերներին տրամադրված պորտֆելի %	Երիտասարդություն	%	Տարեկան
Ֆինանսավորված Երիտասարդ, սկսնակ և փոքր ֆերմերների քանակը	Երիտասարդություն	Քանակ	Տարեկան

Ցուցանիշ	Կարգավիճակ	Միավոր	Հաշվետվությունների հաճախականությունը
Հատկացված գյուղատնտեսական վարկերի թիվը	Պարենային անվտանգություն	Քանակ	Տարեկան
Վարկի միջին չափը՝ ագրո-պորտֆել	Ֆինանսների հասանելիություն	AMD/USD	Տարեկան
Ֆինանսավորված գյուղական ՓՄՁ-ների քանակը	Տնտեսական աճ	Քանակ	Տարեկան
Գյուղական աշխատատեղերի ստեղծման աջակցություն	Տնտեսական աճ	Քանակ	Տարեկան
Վարձակալված գյուղատնտեսական միջոցներ	Պարենային անվտանգություն	Քանակ	Տարեկան
Էներգաարդյունավետության/արևային վարկերի քանակ	Մաքուր էներգիա	Քանակ	Տարեկան
Ընդգրկված մարզերի թիվ	Աշխարհագրական հասանելիություն	Քանակ	Տարեկան
Գյուղական վերանորոգման / բնակարանային վարկերի քանակ	Բնակարանային	Քանակ	Տարեկան

Ե. Պորտֆելը 2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Պորտֆելի հետևյալ վիճակագրությունը արտացոլում է Կազմակերպության վարկավորման պրոֆիլը և սոցիալական ազդեցությունը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ցույց տալով գործունեության այն ծավալը, որն ընկած է սույն Հայեցակարգի հիմքում։

Ֆինանսական ցուցանիշներ

Վարկային պորտֆել (զուտ)	47,5 մլն ԱՄՆ դոլար / ~18 մլրդ ՀՀ դրամ
Ընդհանուր ակտիվներ	53,5 մլն ԱՄՆ դոլար / ~20.3 մլրդ ՀՀ դրամ
Սեփական կապիտալ	~ 8 միլիոն ԱՄՆ դոլար / ~3 մլրդ ՀՀ դրամ (կապիտալի համարժեքության գործակից՝ 19.2%)
Չաշխատող պորտֆելի (NPL) հարաբերակցությունը (30+ օր)	0.30%
Վարկի միջին չափը	USD 5,600 (~AMD 2,100,000)
Պորտֆել ՀՀ դրամով	> 83%
Պորտֆել ԱՄՆ դոլարով	< 17%
Կարճաժամկետ գործառնական վարկեր	Պորտֆելի ~60%-ը
Երկարաժամկետ կապիտալի ներդրումային վարկեր	Պորտֆելի ~40%

Սոցիալական ցուցանիշներ

Ընդհանուր անդամ-փայատերեր	12,000+
Մասնաճյուղեր	10 մարզային + Գլխամասային գրասենյակ Երևան
Ընդգրկված մարզեր	6 (Արմավիր, Արարատ, Արագածոտն, Կոտայք, Վայոց Ձոր, Սյունիք) + Երևան.
Կին վարկառուներ (2X չափանիշ)	վարկային պորտֆելի 77%-ը
Երիտասարդ վարկառուներ (21-35 տարեկան)	Պորտֆելի 30%-ն ըստ քանակի


Լիզինգով տրված գյուղատնտեսական տեխնիկա	500+ գործիքներ մինչ օրս
CPC սերտիֆիկացում	Ոսկե մակարդակ (MFR, 2022 և 2025)
Սոցիալական և բնապահպանական վարկանիշ	sBB+ (2025)

Պորտֆելի կենտրոնացվածությունն ըստ տարածաշրջանի

մարզ (մարզ)	Պորտֆելի մասնաբաժինը
Արմավիր	37%
Արարատ	28%
Արագածոտն	9%
Երևան	9%
Կոտայք	8%
Վայոց ձոր	5%
Սյունիք	4%

Պորտֆելի կենտրոնացվածությունն ըստ վարկի գումարի չափի

Վարկի չափի խումբ	Պորտֆելի մասնաբաժինը
Մինչև 4 մլն ՀՀ դրամ	58%
4 մլն ՀՀ դրամից բարձր	42%



Թողարկող	Կապ
Ֆարմ Կրեդիտ Արմենիա ՈՒՎԿ ԱԿ	fca@fca.am | +374 10 550831

ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ

Թբիլիսյան խճուղի 9/16, Երևան, Հայաստան

www.fca.am